

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (1976 թ. ապրիլի 18)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն»:
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սուրբ Զատիկ է այսօր, սիրելի հավատացյալներ:

Տոնն է Քրիստոսի հարության հրաշքին: Լուսաբացն է արդարության հաղթանակին:

Ամեն գարուն, մեր սրտերում բոլոր, ծաղկում է քաղցր ուրախությունը հարության ավետիսին: Այն մեծ ավետիսին, որ երկու հազար տարիներից ի վեր, իբրև գերագույն բարի լուր, անցնում է դարերի միջով, անցնում է սերնդից սերունդ, միշտ նույն հոգեցունց ուժականությամբ: Արդարության ծարավի, մահախուճապ բազմությունները մարդկային, հավետ ապրելու, տեսիլքը իրենց սրտերի մեջ ծրարած, հույսի լապտերները վառ պահած, ցնծությամբ են դիմավորում բարի լուրը աշխարհասասան, որ ամեն տարի բաց է անում երանության դռները բոլոր հավատավոր սրտերից ներս:

Մահվան ու չարին դեմ՝ Քրիստոսի հաղթանակով, ամեն տարի վերընտին լուսավորվում է ճանապարհը մարդկային կյանքի, մեր կյանքի, ձեր բոլորի կյանքի: Ինչպես ամեն գարուն մի հրավեր է՝ որ նոր լույսով, նոր ջերմությամբ կրկին ծլեն ու ծաղկեն դաշտերն ու հովիտները մայր բնության, այնպես էլ սուրբ Հարության ավետիսը մի ոգեղեն հրավեր է ուղղյալ մարդկային աշխարհին՝ հոգեպես վերանորոգվելու, պայծառանալու և ուրախանալու՝ կյանքի ու արդարության ուժերի հաղթությամբ ընդդեմ մահվան ու չարիքի ճիրաններին: Մահվամբ մահը հաղթելու հրաշքը՝ փրկարար պատասխանն է անհուն թվով սերունդների մեծ սպասումին: Միակ մխիթարիչ, միակ սփոփարար, միակ հզորիչ պատասխանը ամենահաղթ:

Քրիստոսի հարության խորհուրդը, մի փորձեք թափանցել մարդկային

մտքի չափանիշերով, կաղապարներով: Միայն սիրտն է, այսինքն մարդկային հոգու հույզերի աշխարհը, որ կարող է մեզ բաց անել արահետները՝ դեպի կատարները հարության հրաշքին: Այն սիրտը, որի առաջին զարկով սկիզբ է առնում մեր կյանքն այս անցավոր, այն սիրտը, որ կարող է լուսո խորան դառնալ և լուսավորել ու առաջնորդել մեր գործերը, մեր մտքերը բոլոր, այն սիրտը, որ կարող է մարդուն դարձնել բարի սերմերի սերմնացան, մարդկային աշխարհի անդաստաններում:

Արդ, սիրելի ժողովուրդ, կանգնած այսօր կյանքի ու մահվան սահմանների վրա, ցնծագին ուրախությամբ ավետենք Քրիստոսի հարությունը և մեծ առաքյալի հետ միասին բացականչենք՝ թե մահը խափանված է հաղթությամբ: Թող մեր հոգիների մեջ վերստին պայծառանա մեծ հույսը մեր հոգիների փրկության ու անմահության: Նաև մեծ հույսը արդարության արևածագին, մարդկային աշխարհում:

Այո, այսօր ս. Զատկի առավոտյան, հրամայականորեն այժմեական է ու անհրաժեշտ խոսել արդարության հաղթանակի մասին մեր ժամանակների ազգամիջյան հարաբերություններում, որովհետև արդարությամբ է, որ հնարավոր պետք է դառնա պահպանումը և ամրապնդումը աշխարհի խաղաղության և պետությունների համերաշխ գոյակցության: Արդարություն և խաղաղություն իրարից անբաժանելի, զիրար պայմանավորող գաղափարներ են, որոնք, ինչպես անցյալում, նաև այսօր, ամենաքաղցր երազանքներն են հանդիսանում բոլոր ժողովուրդների լայն զանգվածների: Մարդկային քաղաքակրթության պատմությունը, որոշ տեսանկյունից դիտված, կարելի է ասել պատմությունն է այս երկու մեծ գաղափարների բազմադարյան զարգացման: Այդ զարգացման ընթացքը այսօր էլ տակավին իր վախճանին չէ հասած ավաղ: Մեր օրերին էլ մարդիկ ու պետություններ, թեև երդվում են արդարության ու խաղաղության անունով, սակայն հեռու են, բոլորը նույն իմաստը և նույն բովանդակությունը տալու այդ գաղափարներին, որովհետև իրականում տակավին շատերը առաջնորդվում են խմբակցական կամ դասակարգային շահերով, ազգայնական եսակեդրոն մղումներով կամ կայսերապաշտական ձգտումներով:

Այսօր, ս. Զատկի օրով, երբ ոգեկոչում ենք նվիրական հիշատակը Հիսուսի, որ Գողգոթայի բարձունքի վրա իր արյունը թափեց՝ սիրո, խաղաղության և արդարության պատգամները իր շրթներին, մեր քրիստոնեական խիղճը թելադրում է մեզ՝ մատնանշել չարիքին արմատները, որոնք դարերե ի վեր արգելակում են բնական զարգացման ընթացքը ընկերային ու միջազգային կյանքի, դեպի ստեղծումը և ամրապնդումը մի արդար ու խաղաղ գոյավիճակի: Այդ օրը պիտի գա այն ատեն միայն, երբ մարդկային ընկերային ու միջազգային կյանքը վերակառուցվի ճշմարտապես մարդասիրական բարոյականության հիմքերի վրա: Երբ մարդիկ իրենց համար հոգեկան պահանջ նկատեն՝ սատարումը իրենց նմանների բարօրության: Երբ ժողովուրդները իրենց սեփական ապահովությունը և ազգային շահերի պահպանումը տեսնել սովորեն՝ աշխարհի բոլոր ազգությունների եղբայրության, անվտանգության և փոխադարձ շահերի միասնության գիտակցության մեջ:

Այլ խոսքով, երբ կենսագործվի աշխարհում, գերագույն պատգամը սուրբ Ավետարանի՝ «սիրիր քո ընկերը որպէս քո անձը»: Ահավասիկ ճըշմարտությունը, ահավասիկ այժմեությունը Քրիստոսի, որի հարության շնորհներով մենք բոլորս հավատում ենք թե ստուգապես գալու է այն օրը, երբ մարդիկ ու ազգությունները բոլոր, ողջունելու են զիրար իբրև եղբայրներ,

իբրև գործակիցներ, արդար ու ազատ, խաղաղ ու համերաշխ մի աշխարհում:

Սիրելի հավատացյալ զավակներ Մեր, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, այս խոհերով ու իղձերով բերում ենք ձեզ բոլորիդ անխտիր ավետիսը Քրիստոսի սուրբ հարության, խորապես մխիթարված սրտով, որ մեր հայրենաբնակ ժողովուրդը վերջապես ազատագրված անցյալի իր ողբերգական ճակատագրի կապանքներից, իր մայր հողի վրա, իր վերածնած նոր հայրենիքում, քայլ առ քայլ հառաջադիմում է, աճում ու զորանում եղբայրացած ազգությունների մի մեծ ընտանիքում, ոգեշնչված՝ արդար ու խաղաղ մի մարդկային աշխարհի տեսիլքով:

Ինչ լավ է սիրելիներ, որ գարուն է այսօր, որ Զատիկ է այսօր, որ մենք բոլոր հայաստանցիներս մեր հայրենի հողի վրա ենք ապրում, որ այստեղ խաղաղ ու ապահով ենք զգում մեզ, որ աշխատում ենք ամեն մեկս մեր բոլորանվեր ուժերով մեր ժողովրդի է՛լ ավելի պայծառ ապագայի համար:

Փառք արդարության արեգակ և խաղաղության իշխան հարուցյալ Փրկչին մերո Հիսուսի Քրիստոսի. այժմ և հավիտյան. ամեն: